թերու մէջ Ֆրանսերէն լեզուով «La Semaine Egyptienne»ի, «La Réforme»ի և «La Réforme Illustrée»ի, «La Bourse Egyptienne»ի, «La Revue des Conférences en Orient»ի մէջ, և Եգիպտոս հրատարակուող յոյն և հայ լրագիրներու մէջ, ինչպիսիք են «Tachydromos», «Արեւ», «Ցուսաբեր», Կ. Պոլսի «Աքչամ»ը և Ամերիկայի, Ցունաստանի և ուրիշ քաղաքներ լոյս տեսնող հայ թերթերու և լրագիրներու մէջ՝ ուր հայ գաղութներ կան»։ —

Այս տողերն ստորագրած է J. de Manasse «La Semaine Egyptienne» թերթին մէջ (1938, թ. 1-2) առթիւ 1937ի Դեկտեմբերին Գահիրէի մէջ տեղի ունեցած գեղարուեստական ցուցահանդէսին, որուն կը մասնակցէին Զօրեանէ զատ ուրիշ հայ նկարիչներ ալ, որոնց ցուցադրած գործերը կը տեսնուին յատուկ ցուցակներու մէջ։ Մենք հաճոյքով տեսանք հոն օտարներու քով իրենց պատուաւոր դիրքով Գրիգոր Մկրտիչեանը իր «Nature morte»ով։ Գ. Մկրտիչեան յառաջադէմ նկարիչ մ'է՝ որ Պալէնթ հունգարացի նկարչին ձեռքին տակ և ինքնօգնութեամբ զարգացած է։

Ժիրայր Բաղամոշեան ալ խոստումնալից երիտասարդ նկարիչ մը, որ ցուցադրած էր՝ ինքնաւանկար մը, ծաղիկներ և Մահմուտիէ ջրանցքը։

Աստնցմէ զատ Եգիպտոսի լրագիրները յատկապէս զբաղեցան Տիկին Տորիա Կամսարականի արձաններով։ Սա բաւական անուն հանած է իբրեւ ճարտար արուեստագէտ, աշակերտած Բարիզի համբաւաւոր Պուրսէլի։ Իրմէ ցուցադրուած էին՝ Մայրուրիւն, Կիսարձան մը, ջրկիր, պողակիր, ծաղկեկիր, և դիմքեր՝ տրիւզ կնոջ մը և օր. Ռ.ի։

Իսկ Զօրեանի ցուցադրածներն էին, Գահիրէի հին տուներ, Վարդիփուռնջ, Գահիրէ-Մրզկիր, Փորձեր, և Պարի տարազով՝ զոր հրատարակեցինք արդէն։

Խմբ.

ԶԱՐԵՀ ՄՈՒԹԱՖԵԱՆ

Անշուշտ ներկայացման չի կարօտիր մեր այս երիտասարդ տաղանդաւոր արուեստագէտը. մէկէ աւելի անգամներ Բազմավէպի էջերուն մէջ երեւցաւ ան իր նկարագրով, արուեստին երախայրիքով՝ որ խոստումնալից էր։ Իտալիայէն Զուիցերիա փոխադրուած էր ան քանի մը տարիէ ի վեր, և ամէն անգամ որ նոր ցուցահանդէս կը սարքէ իր պատառներուն՝ նոր փայլով ու յղացումներով կը ներկայանայ՝ արուեստասէրներու ու արուեստագէտ բազմութեան մը ուշը գրաւելով։

Այս տարի Փետրուարին վերջերը Ժընեւի մէջ տուաւ իր ցուցահանդէսը։ Բեղուն և խնամոտ արտադրողի իր անունը արդէն կարգն անցած ըլլալով տեղւոյն մէջազգային հասարակութեան՝ հմայած էր շատեր, որոնք անգամ մ'ալ հաստատուեցան իրենց համոզման մէջ թէ ապագայ ունեցող արուեստագէտ մ'էր Մութաֆեան և պատիւ բերող իր ազգին ու Մխիթարեաններուն՝ որոնք չէին սխալած զինքը Մուրատեան Թոշակաւոր սաներու կարգը դասած ըլլալու։

Մութաֆեան իր տպրած միջավայրի բնութիւնն էր պատկերացուցած այս անգամ՝ բացի մէկ երկու դիմանկարէ և պատկերէ մը. հմայքոտ տեսարաններ Լեմանի լճէն և Հռոն գետէն։ Ինչպէս լաւ կը խորհրդածէին գլուխներէն շատեր, Եւրոպական գեղարուեստի գծերուն տակ՝ Արեւելքցիի բանաստեղծութիւն մը կը տարածուէր, երաշներու և հեքեաթներու աշխարհին յատուկ գծերը որ չափի և ձեւի միօրինակութիւնը կը կոտրէն։

Ուրախ ենք որ հայ անունը իր պատուին մէջ է այդ հմայքոտ լճերու ափին՝ շնորհիւ Մուրթաֆեանի և նմաններուն։

Այս գնահատական տողերը մամուլին յանձնած պահուն՝ կը մաղթենք և վստահ ենք որ Մուրթաֆեան միշտ պիտի բարձրանայ դէպի արուեստի կատարելութիւն՝ նորանոր յաղթանակներով։

ԹՂԹԱԿԻՑ

ՕՐՈՒԱՆ ԳՐՔԵՐ

ՀԱՅՈՒՀԻՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌՋԵՒ. Հ. Վարդան Հացունի, Տպ. Վենետիկ, 1837.

Իր տեսակին մէջ եզակի, հարուստ և լուրջ աշխատութիւն մը, զոր ի լոյս ընծայած է Վենետկոյ Մխիթարեան միաբանութեան երեւելի գիտնականը՝ Հայր Վարդան Վ. Հացունի։

Աւելի քան յիսուն տարի բանասէրները ժխտական գործ կատարեցին հայ իրականութեան մէջ։ «Ժխտական» ըսելով չեմ ուզեր թերագնահատել ճշմարտութիւնը երեւան բերելու ձգտող ճիգերը։ Ճշմարտութիւնը, որքան ալ դառն ըլլայ, միշտ նախամեծար համարելի է փառաւոր սուտէն։ «Ժխտական» կ'ըսեմ՝ որովհետեւ խախտեցին, տեղափոխեցին նախ Խորենացին, յետոյ՝ Եղիշէն, և չեմ գիտեր կարգը որո՞ւ պիտի գայ։

Իրաւունք ունին...։ Իրականութիւնն այն է որ դասական մեր մատենագիրները՝ իրենց պատուանդաններուն վրայ – նոյն միջավայրին և ժամանակին մէջ – հաստատուն և բարձր, աւելի սրտապնդիչ և սիրելի էին։

Այն գաղափարը՝ թէ ոսկեդար մը ունեցած ենք, հոյլ մը պանծալի մատաւորականներ արտադրած ենք՝ զրոց գիւտին առընթեր, մտաւորականներ՝ որոնց շնորհիւ ապահոված ենք հայ մշակոյթին փրկութիւնը, հպարտութեամբ կը տոգորէր մեր սիրտը։

Մինչդեռ Խորենացին քշելով իններորդ դար, Եղիշէն՝ եօթներորդ դար, Կորիւնը՝ այս դար, Եզնիկը՝ այն դար, օր մը պիտի հարցնինք՝ «ուր նեցա՞ք թէ չունեցանք Ոսկեդար»։

Հայր Վարդան Վ. Հացունի կը հաւատայ թէ ունեցանք ոսկեդար։ Ցիրաւի իր պատկառելի գործին երկու հարիւր քսան չորս աղբիւրներուն մէջ՝ պատուի տեղն ունին մեր բոլոր երեց և կրտսեր թարգմանիչները։

«Հայուհին պատմութեան առջեւ» ժամանակակից հայ բանասիրութեան պատմութեան մէջ իւրայատուկ դիրք կը գրաւէ իր ոչ-ժխտական հանգամանքով։

Շինարար, սրտապնդիչ երկասիրութիւն, մանաւանդ մեր այս վարատական և յուսահատ օրերուն մէջ։

Հ. Վարդան Վրդ. իր լուսարձակը պտտցուցած է նախընթաց բոլոր դարերուն վրայ, և մթամած անցեալէն, նման անպարագիծ ծովէն, կարծես մոգական գաւազանի մը հարուածով, բարձրացուցած է հայուհին, իբրեւ յաւերժահարս։

«Եթէ ուզէինք չափել հին հայ կինը վերջին գաւառացի հայուհւոյն վրայ, – նայելու չենք ներկայ յեղաշրջման շրջանին – որոյ բարուց մէջ խտացած է օտար բազմադարեան բռնութեան պարտադրած անձուկ ու նկուն կեանքը, գրեթէ իբրեւ աղախին մ'ամուսնոյն, և անջատ ընկերութենէն, մերթ և ընտանեկան սեղանէն, և կամ եւրոպաբնակ հայ կնոջ վրայ, որ ընդ-օրինակեց արեւմտեան բարքը, և այն իւր ըմբռնած ձեւով ու չափով, մեծապէս պիտի սխալէինք, մեր տեսութեանց մէջ։ Հարկ է իսկական հայուհին որոնել պատմութեան մէջ և հոն միայն»։ (Հ. Վ. Հացունի, Յառաջաբան)։

Ի՞նչ մխիթարական յայտնութիւն։

Ուրեմն «Larousse»ի մէջ մեր տեսած «չալվայ»ով հայուհին վաւերական չէ. ուրեմն եւրոպական մեծ մայրաքաղաքներու մէջ օտարուհիները կապկող, ծեքծեքուն հայ կիները՝ այլասերածներ են։

Ի՞նչ մխիթարական յայտնութիւն։

Հայր Վարդան իր մօտ կանչած է իտալացի նկարիչ Վանդելլին, և, յեցած մատենագրական տեղեկութեանց վրայ, միասին վերարտադրած են հայուհին, ինչպէս որ էր հինգերորդ դարուն։

Նկար մը՝ որ կը զարդարէ հատորին առաջին էջը։ Գլուխ գործոց մը։

Չեմ նկարագրեր, որովհետեւ կը վախնամ զայն եղծանելէ։ Պէտք է տեսնել։

Այսչափ միայն ըսեմ՝ որ այդ Հայուհին չեմ փոխեր ժամանակակից ոչ մէկ ֆրանսացի, անգլիացի, գերմանացի, իտալացի, ամերիկացի ազնուականուհիներու հետ։

Եւ խորհիլ որ մեր նախամայրերը հասեր են ճաշակի այդ նրբութեան երբ և ոչ իսկ գոյութիւն ունէին ներկայ աշխարհավար, մեծ և քաղաքակիրթ ազգերը։

Այս նկարը տեսնելէ անմիջապէս ետք հոգիիդ վրայ արեւ կը ծագի կարծես և առողջ ախորժակով մը իրարու ետեւէ կը կարդաս հատորին 19 գլուխները, յառաջաբանը, վերջաբանը, 470 էջ։

Նախ կը սորվիս թէ հայ կինը ինչպէս կը սնանէր և կը դաստիարակուէր, հետզհետէ զայն կը ճանչնաս առտնին կեանքի մէջ, ամուսնութեան մէջ, մայրութեան մէջ, ընկերութեան մէջ, վայելչագիտութեան մէջ, եկեղեցւոյ մէջ, բա-

digitised by A.R.A.R.@

բեպաշտութեան և առաքինութեան մէջ, նոյն իսկ չարութեան մէջ, ուսումնասիրութեան մէջ, արուեստներու մէջ, քաղաքական կեանքի մէջ, տառապանքի մէջ, սուգի մէջ, օտար պալատներու մէջ, քրիստոնեայ յարկերու մէջ, և այնուհետեւ դուն եւս, հեղինակին հետ «կրնաս ճակատաբաց յայտարարել՝ թէ իսկապէս ուշագրաւ և պատկառելի է հին հայ կնոջ պատկերը, շատ աւելի քան զոր կարելի է երեւակայել մեր ցարդ ունեցած անկատար ծանօթութեամբ, կամ մանաւանդ բնաւ երեւակայուած չէ»։

Հայր Հացունի իր այս վաստակը բարձրացուցած է գիտական ամուր հիմերու ըրայ։

Կը խօսին փաստերը, կը խօսին պատմական անձերը, որոնց թիւը կը հասնի հազար ութհարիւր քառասուն հինգի։

Վճիտ ոճ։ Ո՛չ մէկ աւելորդաբանութիւն։ Բազմաթիւ պատկերներ, որոնց մէջ կան որ երբեք լոյս չեն տեսած։

434րդ և 435րդ էջերը շքեղ ուղերձ մ՚են առ Հայուհին։

Բանաստէրի մը սրտէն (որ պարտի սոսկ պատճառաբանել, փոշիներու տակէն թիւեր և անուններ յարուցանել, համադրել) երբեք այսքան քնարական յորդ չունչ չէ արտաբերուած։

Ահաւասիկ գործ մը, որուն ընթերցումը կատարեալ վայելք է։

Գործ մը՝ զոր արտադրելու համար անհրաժեշտ է ունենալ տաղանդ և աշխատասիրութիւն։

Գործ մը՝ որ կը բխի խորունկ ազգասիրութենէ, և ինչպէս ըսի, շինարար է, սրտալնդիչ։

Գործ մը՝ զոր կարդալէ ետք հպարտ կը զգաս որ հայ ծներ ես։

Գործ մը՝ որ աւելի կ՚արժէ քան ոսկին, աւելի քան հարիւր օտար վէպ, և հայ երիտասարդները իրենց քոյրերուն կամ խօսեցեալներուն պէտք է նուիրեն զայն, որպէսզի անոնք ջանան ըլլալ իրենց նախամայրերուն արժանի ժառանգորդուհիներ։

ՀՐԱՉ ՔԱՋԱՐՆԻ

Oriental Manuscripts of the John Frederick Lewis Collection in the Free Library of Philadelphia. *Պատրաստեց* Muhammed Ahmed Simsar. Philadelphia 1937, *Լաթակազմ*, 48 *ձեռագրաց արտատպութիւններով, էջք* 20 + 248։

Ծախուելու համար չէ հրատարակուած այս շահեկան հատորը զոր նոր ստացայ գրախօսելու համար։ Անգլիերէն գրախօսականիս հետ պատրաստեցի Հայերէն գրախօսական մ՚ալ մասնաւորաբար ցուցակին հայերէն ձեռագիրները նկատի ունենալով։

Մաքուր տպագրութեամբ, գեղեցիկ և արժէքաւոր այս հրատարակութիւնը կը պարունակէ ձեռագրաց ցուցակը J. Fred. Lewis*ի, որ նուիրած է Ֆիլատէլֆիոյ քաղաքին մատենադարանին։ Ան եղած է նախագահ կամ անդամ վարչութեանց շատ մը արուեստից և պատմութեան ընկերութեանց և ակադեմիաներու։*

Ցուցակագիրն է երիտասարդ և համակրելի Պարսիկ գիտնական մը Մուհամէտ Ահմէտ Սիմսար։ Զինքը առաջին անգամ տարիներ առաջ Նիւ Եօրք ճանչցայ, սակայն Ֆիլատէլֆիոյ քաղաքին ձեռագրաց հայերէններուն ցուցակագրութեանս առթիւ դարձեալ իրեն հանդիպելու բախտն ունեցայ։ Սիրալիր և օգտաշատ եղաւ մեր վերհանդիպումը։ Ան ինծի ցոյց տուաւ մամուլի տակ գտնուող իր ցուցակին փորձերը՝ որոնց հայերէն բաժինը սրբագրեցի մամուլին յառաջացած պայմաններուն ներելուն չափ։ Սիմսար չգիտնալով հայերէն՝ իր ցուցակին հայերէն բաժնին համար օգտուած է Ֆիլատէլֆիոյ Ս. Սահակ–Մեսրոպ եկեղեցւոյն երէց Մկրտիչ Մինասեանէ, որ իր կարգին դժբախտաբար չըլլալով փորձառու նման պարագաներու համար, ակամայ ցուցակագիր Սիմսարը առաջնորդած է սխալներու։

Ներկայ ցուցակը կը պարունակէ հաւաքող J. F. Lewis*-ի հաւաքման 153 արեւելեան լեզուով ձեռագիրներուն նկարագրութիւնը։ Հատորը կը բացուի նախ յառաջաբանով մը շատ կարճ, յետոյ կու գան պարունակութեան և արտատպութեանց ցանկերը։ Ասոնց կը յաջորդեն համառօտագրութեանց ցանկը և հուսկ երկար ներածութիւն մը։*

Բուն ցուցակը կը սկսի 35 Արաբական ձեռագիրներով։ Ասոնցմէ 21 հատը Ղուրաններ են, որոնցմէ հնագոյնը՝ թիւ 21, մագաղաթեայ, գուֆի գրչութեամբ, 10–11րդ դարէն է։ Ամէնէն ճոխը թիւ 1 է 1764էն։

Պարսկականը կը բաղկանայ 52 ձեռագիրներէ, որոնց կարգին է 1620էն բառարան մը (թիւ 38), և օրինակ մը Հաթիֆի «Պատմութիւն Լենկթիմուրի» գործին (թիւ 43) արտագրուած 1583ին։ Կան և ուրիշ շահեկան հատորներ գրական զանազան ճիւղերու վերաբերող, որոնց կարգին և 10 Շահնամէներ, մեծ մասամբ ճոխ կերպով մանրանկարուած։

Ասոնց կը յաջորդեն թրքական 10 ձեռագիրներ և վաւերաթուղթեր, որոնց մէջ արժէքաւոր

է և պատմական կարեւորութիւն ունի թիւ 92ը, «Վերջին կամք և կտակ Ահմէտ Բաշայի»։ Այս Ահմէտ բաշան որ ամուսնացաւ Սուլթան Պայազիտ Բ.ի (գահակալեց 1481–1512)աղջկան և այդ Սուլթանին մեծ վեզիրը եղաւ, ընդհակ ծագմամբ Պալգանի մանր քրիստոնեայ իշխանի մը որդին էր, որ զժգոհութեան պատճառաւ հեռացաւ հօրմէն և իսլամանալով՝ Սուլթանին խնամացաւ և անոր ծառայութեան մէջ մտաւ։ Այս շահեկան վաւերաթուղթը թուագրուած է 1511։

Թրքական ձեռագիրներուն կը յաջորդեն 3 Հնդկական, 8 Սանսգրիտ, 1 Նեբալեան, 4 Պահլի, 1 Սիամական ձեռագիրներ, որոնցմէ վերջի, 1 Սիամական ձեռագիրներ։ Ես մասկու գան 11 Հայկական ձեռագիրներ։ Ես մասնաւորաբար կանգ կ՚առնեմ վերջիններուն վրայ։

Ասոնցմէ առաջինը թիւ 115 Աւետարան մըն է, Մկրտիչ գրչէն՝ գրուած Սանահնի Ս. Աստուածածին «հրաշափառ սուրբ կաթուղիկիս» 1504ին։ Ստացողը Խաչատուրի որդի Մելիտուն՝ որուն մեծ հայրը խուելուզ «որ սրախողխող մահուամբ կատարեցաւ ի ձեռն անաւրինաց»։ Երկար յիշատարեցաւ ի ձեռն անաւրինաց»։ Երկար յիշատակարանը կը նկարագրէ Պարսից արշաւանքները ի Կովկասեան Հայաստան և այդ առթիները ի Կովկասեան Հայաստան և այդ առթիներ։ Ես այս ծանօթութիւնները կու տամ ուղղակի իմ իսկ ցուցակագրութենէս, որովհետեւ այս հրատարակուած ցուցակին մէջ տրուածները կամ սխալ և կամ պակասաւոր են. օրինակ՝ այս ձեռագրին չէ տրուած գրուած վայրին տաճարին անունը, ինչպէս նաեւ ուրիշ մանրամասնութիւններ։ Այս հատորէն առնուած Յովհաննէս առաքելին պատկերը կը զարդարէ իր մասը։

Յաջորդ թիւ 116 ձեռագիրն ալ աւետարան մըն է, որուն միակ յիշատակութիւնը իր կողմն է, որուն միակ յիշատակութիւնը իր կողմն է, որուն միակ գրութիւնն է. «Ակնեցի քին ազուցուած սա գրութիւնն է. «Ակնեցի քին ազուցուած սա գրութիւնն է. Երկու եղբարք տ(ի)րացու Ազարիա և Գասպար, երկու եղբարք տ(ի)րացու Ազարիա և Գասպար, որդիք Խօճայ Յոհանճանի ի Նարվերդ. քաջ որդիք Խօճայ Յոհանճանի ի Նարվերդ. քաջ Հուսեալք զբարբառ Թուրքաց. թարգմանեցին զԱուսեալք զբարբառ Թուրքաց. թարգմանեցին զԱուետարանն ի լեզու նոցա ի Կոստանդինուպոլիս. ետարանն ի լեզու նոցա ի Կոստանդինուպոլիս. 1794, յուլիս 16. գնեցի ի մեծն Պոլիս ի ձեռանէ Պրն. Վարդանի Աչէթեան, զրչ. 322»։

Ասիկա կրնանք նկատել նաեւ հաւաքման ամէնէն հետաքրքրական ձեռագիրը։ Ճոխ կերպով մանրանկարեալ, երկսիւն և նոտրգիր այս ձեռագրին մէկ սիւնը հայ աւետարանը, իսկ միւս հանդիպակաց սիւնը ատոր հայատառ թուրքերէն թարգմանութիւնը։

Թիւ 117 և 118 աւետարաններ են 16րդ դարէն, մանրանկարեալ բոլորգիր, բայց առանց յիշատակարանի։ 119ը հայատառ թուրքերէն աւետարանի օրինակ մը ԺԸ դարէն։ 120ը՝ Սաղմոսք Դաւթի, բոլորգիր, մագաղաթեայ և երեք մանրանկարով, որոնք ուրիշ ձեռագրէ հանուելով հոս փակցուած են, հաւանաբար ԺԶ դարու գրչութիւն։ Թիւ 121ը՝ մանրուսուցում մըն է, մագաղաթեայ, բոլորգիր, գրուած ի Դրազարկ՝ Ստեփանոսէ որ անաւարտ կը թողու. գործը կը լրացնէ երկրորդ Ստեփանոս մը Երուսաղէմի մէջ «ի վանս որ կոչի սուրբ Հրեշտակապետք» Կիրակոս քահանայի համար։ Մկրտիչ Ս. Ազաւնունի իր «Միաբանք և Այցելուք»ի մէջ չի յիշեր այս Կիրակոսը, սակայն երկրորդ գրիչ Ստեփանոսը կը յիշուի (Տես Երկայն մանուանեալը)։

Թիւ 122ը Մաշթոց մըն է հաւանաբար 15–16 դարու գրչութիւն (վերակազմեալ 1654ին), գրիչը Յովհաննէս (կը յիշէ վաղամեռիկ եղբայրը Կոստանդին)։

Թիւ 123ը Ցիսուս Որդի, գրեալ ծերացեալ Կարապետ երէցէ, 1628ին յունիսի 9 «ի յանապատս սուրբ Խաչիկ հաւրն և սուրբ Վարդանացն Նշխարաց որ աստ եդեալ են ի պարծանք և ի պահպանութիւն գաւառիս Համշինոյ ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի և սուրբ Սիոնի»։ Իսկ 124 և 125ը Ախթարքներ են թղթեայ, առաջինը 1816էն։

Ինչպէս կը տեսնուի ոչ բացառիկ կարեւորութեամբ հասարակ ձեռագրաց հաւաքածոյ մըն է, այսուհանդերձ գնահատելի են թէ հաւաքողը և թէ ցուցակագրողը իրենց ջանգրութեանց համար։ Նախապէս յիշեալ արտատպութենէն զատ կան երկու արտահանութիւններ ես թիւ 116 ձեռագրէն։

Հայերէն բաժնին կը յաջորդեն ցուցակագրութիւնք 1 Ղպտի, 13 Եթովպական, 10 Եբրայական, 1 Սամարական, 2 Սիւրիական և 1 հատ ալ հին Եգիպտական պապիրուսի։

Հատորը կ՚աւարտի գրացանկով մը ինչպէս նաեւ անփոխարինելի խորագրաց և յատուկ անուանց ցանկերով։

Գրախօսուած հատորը իր ամբողջութեան մէջ գնահատելի գործ մը կը նկատեմ։

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

digitised by A.R.A.R.@